





### ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Հ Յ

Վ. ԲՐԱԿԵ

ԿՈՐ ՀԻՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ

## Թարգմանութիւն Մ. Տիրացեանի

۲۷۳

بِسْمِ اللّٰهِ الرَّحْمٰنِ الرَّحِيْمِ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

H. KILDJIAN  
LIBRAIRE-ÉDITEUR  
CONSTANTINOPLE

ԳԵՏՐՈՒ ԳՈՍՏԱՆՃԵԱՆ  
ՄԱՅԻԱԴՎԵԱՆԻ

Phi 211

7 Mars 918

Qur'ān

**8** HOEM. 1939 **191**

CON

Հրատարակութիւն «ԿԱՅԾ»-ի

1906



Տ Ե ՀԱՎԱՐԱՐ ՏԱԳՎԱՐՈՒՄԱԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԵՐՍԱԿԱՐԱԿԱՐ-ԼՐԴԱԾՈՎ ՄԱԿԱՐ

Տպարան Մ. Վարդսոնեանի Տիպ. Մ. Վարդանանց



**Եկատերինա Առաքելութեան հրու աղաղակը այնքան**

«Կորչին սօցիալ-դեմոկրատները» աղաղակը այնքան  
յաճախ է կրկնուում, որ հաւանականաբար, դու ևս, ընթեր-  
ցող, աւելի քան մի անգամ լսած կը լինես, և ով գիտէ  
դու էլ արտասանած լինես, կամ թերևս պատրաստ ես  
եղիլ արտասանելու այդ խօսքը! Զէ՞ որ այդ սարսափելի  
սօցիալ-դեմոկրատները, յանդուզն չարազութներ են: Մի-  
թէ՞ նրանք չեն որ մտադրել են կործանել և կատարելա-  
պէս ոչչաշնել այն ամենը, ինչ որ նւիրական է մեզ հա-  
մար, և սեփականութիւնը, եւ ամուսնութիւնը, և՛ ընտանի-  
քը. նրանք չեն, որ մեղադրում են հրձիգութեան և սպա-  
նութեան մէջ:

Շատ կարելի է, որ դու ևս, ընթերցող, այդպէս ես կարծել. եթէ ոչ դու, ապա քո հարևանները անկասկած:

Բայց եթէ իսկապէս քո մտքով այդպիսի բաներ  
անցկացրած լինես, կամ դու քեզ հարցըրած լինես, թէ մկ-  
քեր են այդ սօցիալ-դեմոկրատները, կամ թէ նրանց մասին  
ինչ գիտես, այն ժամանակ անկասկած պիտի խոստովան-  
ւես որ դու շատ քիչ բան գիտես նրանց մասին։ Այդ  
դէպքում, սօցիալ-դէմոկրատ ուսմունքի մասին ունեցած  
կարծիքները արդիւնք եղած կը լինեն ոչ թէ պարզ հա-  
մոզմունքի, այլ հիմնւած կը լինեն աւելի շուտով ինչ որ  
շփոթ և անդիտակցութիւնից բղխող թշնամական զգաց-  
մունքի վրայ։ Բայց նախ քան որևէ մէկին իւր ուղղութեան  
պատճառով հալածելն ու ատելը, մարդ պէտք է համոզւած  
լինի իւր իրաւացիութեան մէջ, որովհետև միթէ ևս իրա-  
ւացի վարւած կը լինեմ, եթէ սկսեմ ատել ու հալածել մի  
մարդու, որ ձգտում է իրականացնել այն՝ ինչ որ լինացի է և  
արդարացի։

*Տեսնենք, ուրեմն, ընթերցող, թէ ի՞նչ բանի են ձըգ-  
տում սօցիալ-դեմոկրատները և ի՞նչ են սւզում. ես, ինչ-*

ամեն ասելիքը կը լինի ճշմարտութիւն. դուք չէ ասում բանաստեղծը: «Մտրակի՞ր ստախօսին»:

«Սօցիալ-դեմոկրատները ուզում են ամեն ինչ բաժանել ահա առաջին բանը, որ իսկապէս անտարակուսելի է թւում: Ամենքը իրանց ունեցածը պէտք է բերեն և այդ ձևով հաւաքւած հարստութիւնը բայցոր մարդկանց մէջ բաժանելուց յիտոյ, ամեն մարդ իրաւունք կունենայ իր ունեցածի հետ ուզածին պէս վարելու. իսկ երբոր մէկը միւսից աւելի սկսէ ծախսել և այդպիսով դարձեալ ըստացւածքի անհաւասարութիւն ծագելով, երևան գան հարուստներն ու աղքատները—այս ժամանակ կրկին բաժանելու գործողութիւն տեղի կունենայ և այդպէս շարունակ: Ամենից առաջ հարկաւոր է բաժանել հողն ու փողը:

Բայց, ասա ինձ, ընթերցող, դու երբ եիցէ տեսել բոլի մի մարդ, որ այդպիսի բան ցանկանար, կամ գուցէ դու լսմծ կը լինես այդ տեսակ պահանջի մասին: Ի հարկէ ոչ Շյդպիսի մարդիկ դու չես տեսել և նրանք իսկի գոյութիւնն էլ չունին: Պարզ է, որ այդպիսի մի պահանջ, աշխարհումս գոյութիւն ունեցող բոլոր պահանջներից ամենաանմիտը կը լինէր: Ինչպէս օրինակ պէտք է բաժանել երկաթուղին: Ժւմ տալ ըէլլուները, ժւմ շոգեշարժը, ժւմ վագօնները:

Զէ որ ամենքը հաւասար բաժին ստանալու իրաւունք ունեն, և այդ դժւար կացութիւնից դուքս գալու միակ ելքը մընում է նրանց կտոր կտոր անելու մէջ. մէկը կըստանար անիւի մի կտոր, երկրորդը վագօնի դրան կէսը, երրորդը մի պտուտակ ևայլն. խենթերն անզամ մտքերից այդպիսի բան չեն անցկացնի: Հողն ու փողը, դեռ կարելի կը լինէր բաժանել. բայց չէ որ սրանք, մանաւանդ փողը, մի չնչին մասն են կազմում ամբողջ հարստութեան: Հողի բաժանման դէպքում հարկաւոր կը լինի իրաքանչիւր հողաբաժնում անտեսութեան համար հարկ եղած շէնքերը կառուցանել, և իւրաքանչիւր հողատիրոջ տալ՝ դաշտեր մշակելու անհրաժեշտ գործիքը: Ուստի պարզ է, որ հողի բաժանումը ոչ մի դէպքում հնարաւոր չէ, և ամին մի սօց.-դեմոկրատ լաւ գիտէ որ այդ միջոցը ոչ ոքի համար օգտակար չլի կարող լինել: Ֆրանսիական առաջին յեղափոխութեան ժամանակ 1788 թւին մտածեցին գիւղացիներին օգնել, բաժանելով նրանց՝ բոլոր խոշոր կալւածները, և ի՞նչ արդիւնք

ստացան դրանից: Ֆրանսիայում գիւղացիք այնքան աղքատ են, որ նրանցից միլիօնաւորներ ապրում են առանց լուսամուտների և միայն մի դուռ ունեցող բնակարաններում և միայն ամենահարուստների աներն են, որ դռնից զատ և մի պատուհան ունեն?!! իսկ գերմանացի միջակ գիւղացին միթէ նախանձելի վիճակ ունի: Միմիայն ամենից հարուստներն ու ամենից մեծերն են, որ լաւ են ապրում. իսկ փոքրերը, աղքատները, իրանց տունն ու տեղը պարտից ազատելու համար, պարտաւոր են չարչաշար աշխատել և այնուամենայնիւ նրանք բոլորն էլ համարեա պարտքի տակ են: Դրա պատճառը նրանումն է, որ գիւղատնտեսութեան ներկայ պայմաններում կարելի, է շահել միայն այն դէպքում, երբոր մեծ մի հողաբաժին է արդիւնաբերուում, մշակման նորագոյն եղանակներով: Սօցիալ գեմօկրատները, այդ բանը գիւղենալով է որ ամենից քիչ են մտածում հողի բաժանման մասին: Ընդհակառակը նրանք օգտակար են համարում միանգամայն դրա հակառակը և ենթադրում են որ մօտէ այն ժամանակը, երբ իւրաքանչիւր գիւղի գեղջուկները կըսկսեն միանալ, հողը միասին մշակելու համար, գործադրելով գիւղատնտեսութեան նորագոյն գործիքներն ու եղանակները: Ապա թէ ոչ հակառակ դէպքում, նրանք անկարող կը լինեն դիմանակ խոշոր կալւածատէրերի մըցման, որոնք օգտաւում են բոլոր նորագոյն միջոցներով:

Այդպիսով, այն ամենը, ինչ որինուում է սօց.-գեմօկրատների մասին, որ իբր թէ նրանք հողի բաժանումն են քարոզում, միանգամայն ստութիւն է: Սօցիալ գեմօկրատների թշնամիները, նրանց վրայ այդպիսի մեղադրանքներ բարդելով, ոչ միայն խարում են գիւղացիներին, ոչ միայն անխղճորէն ստում են, այլ և վիրաւորանք են հասցնում նըրանց: Գերմանական գիւղացին վաղուց ի վեր դադարել է այնքան յիմաց լինելուց, որ հաւատք ընծայէր այդպիսի ցընորքների: Այդ յիմար պահանջը վերագրում են սօց.-գեմօկրատներին, նրանց հակառակորդները: Այժմ մենք տեսնում ենք, որ հողի բաժանումը մտացածին մի բան, մի անմիտ սուտ է: Ինչ վերաբերում է փողի բաժանման, ես ձեզ մի գւարճալիք կը պատմեմ, որ յիսուն տարի առաջ է հնար-

ւած՝ ժողովրդի այդպիսի ձգտութերի վերայ ծիծաղելու նը-  
պատակով։

Պատմում են որ, 1848 թ. Ֆրանքֆուրտում, ծառուղու  
վրայ զբօննող Ռոտշիլդին մոտենում են երկու բանուր և ա-  
սում. «Վարո՞ն Ռոտշիլդ, դուք հարուստ էք. պէտք է ձեր ու-  
նեցածը կիսենք»։ Ռոտշիլդը առանց շփոթելու, հանում է քը-  
սակը և ասում. «Եւաւ, միծուրախութեամբ. շատ հեշտ  
խնդիր է այդ. ես ունեմ 40 միլիօն գուլդէն, (բանուրները  
այդ լսելով սաստիկ ուրախանում են) իսկ գերմանիան 40  
միլիօն բնակիչ, հետևապէս, ձեզ ամեն մէկիդ մի գուլդէն  
է համում. համեցէք, ստացէք ձեր բաժինը։ Ռոտշիլդը  
բանուրներին մի մի գուլդին տալով, ժամանակ ժամանակում  
է, մինչ վերջինները շփոթւած՝ անդուսմ էին իրանց գուլ-  
դէնները։

Ահա թէ ինչպիսի անհեթեթ բան է փողի բաժանման  
պահանջը։

Ինչպէս տեսնում էք, առանձին խելք ունենալ հար-  
կաւոր չէ հասկանալու համար, որ սօց.-դեմօկրատների ա-  
հագին մասսան չի կարող այդպիսի յիմար առաջադրու-  
թիւններ անել. ի հարկէ, ամենօւրեք կան խելագարներ,  
բայց այդ չի նշանակում, որ գերմանական ռայխստագի ընտ-  
րութիւններին ձայն տւող 3,100,771 մարդիկ կորցրել են  
իրանց խելքը։

Եթէ մենք ուշ դարձնենք դեմօկրատիքական ժո-  
ղովներին, լրագրներին և ցանկանանք ուսումնասիրել  
հարցը, սօց. դեմօկր. գրականութեամբ, կը տեսնենք մեծ  
զարմանքով, որ սօց. դեմօկրատները ոչ միայն չին ուզում  
ունեցածները բաժանել, այլ ընդհակառակը ձգտում են ո-  
չնչացնել այդ բաժանումը. ինչքան էլ որ տարօրէն թւի,  
բայց այդ այդպէս է։

Սօց. դեմօկրատները գտնում են, որ ներկայումս իսկ  
և իսկ գորութիւն ունի հողային բաժանումը և այդ կատար-  
ւում է ամենաանարդարացի եղանակով։ Ինչպիսի կլոր գու-  
մարներ են իրանց բաժին հանում ամեն տեսակ ձեռնար-  
կողներ, որոնք այնուամենայնիւ ընդհանուր յարգանք ու  
համակրութիւն են վայելուած։ Եւ այդ պատճառով որքան  
բանուրներ, արհեստաւորներ, գիւղացիներ զրկում են այն-

բան մեծ ջանքերով և զրկանքներով ձեռք բերած իրանց կարողութիւնից:

Բայց սօց դեմոկրատները չէին որ առաջինը երեւան հանեցին ներկայումս տեղի ունեցող այդ ամենաանարդարացի բաժանումը. այդ բանը երևան հանեցին աւելի շուտով, նրանց հակառակորդների թվին պատկանող մարդիկ: Ահա թէ ինչ է ասում աշխարհի բոլոր ծայրերում փառաբանւած ամենաանշանտոր գիտնականներից մինը, անգլիացի Մելլը:

«Մենք տեսնում ենք, որ այն ամենը, ինչ որ ձեռք է բերւում աշխատանքով, բաժանում է համարեա թէ աշխատանքին հակառակ յարաբերութեամբ. ինչո՞ւ համար ամենից խոշոր բաժինները ստանում են նրանք, որոնք ոչինչ չեն շինուած և յետագայ նւազ խոշոր բաժինները ստանում են նրանք, որոնց աշխատանքը ըստ էութեան չնչին է: Ուրիշ խօսքով, որքան աւելի ծանր ու անհաճոյ է դառնում մարդու աշխատանքը, այնքան աւելի քիչ է ստանում նա, և ամենայոդնեցուցիչ ու առողջութեան համար ամենավտանգաւոր ֆիզիքական աշխատանքը չի տալիս այն հրաշխաւորութիւնը թէ բաւարարութիւն պիտի տրւի կենուական ամենաանհրաժեշտ կարիքներին»:

Միթէ սարսափելի և միևնոյն ժամանակ ճշմարիտ չէ այս, ընթերցող. քո շուրջը տեսածներդ միթէ քեզ չե՞ն համոզում այդ բանի մէջ և միթէ քո սեփական փորձառութեան մէջ չե՞ս գտնում այդ բանի հաստատութիւնը: Ահա գին հարստութիւն դիզոդները, մէկ վայելքից միւսի մէջ նետողները, իրանց ամբողջ կեանքում գուցէ ոչ մի օգտակար բան չեն արել. և առանց աշխատելու սեփականացրել են ուրիշի աշխատանքի պտուղները:

Այժմ ընթերցող, դիմիք նրան, ով որ իսկապէս «իւրերեսի քրտինքով ուտում է իւր հացը» դիմիք իւր աշխատաւորական ոյժը վաճառելու ստիպւած բանւորին: Նա եթէ ճարպիկ, ժրաշան և ուժեղ է և եթէ «բախտը» երեսից չէ ձգում նրան, կարողանում է երբեմն սև օրւայ համար մի փոքրիկ խնայողութիւն անել: Բայց բանւորների ահազին մեծամասնութիւնը, չը նայելով իւր աշխատանքով ու զբութամասնութիւնը, պատկանութիւնը:

կանքներով լի կեանքին, չի կարող այդքանն էլ անելու եւ երբ նրանք ստիպւած կը լինեն դադարել աշխատելուց, նոյնքան աղքատ կը մնան, որքան աշխատանքի առաջին օրը: Եւ որքմն այսպիսիները գոյութիւն ունեն, որոնք հաւատացած չեն թէ այդքան յամառ ու սոսկալի աշխատանքից յետոյ, իրանք և իրանց ընտանիքը չեն մեռնելու սովոր!»

ԱՐՄԵՆԻԱՆԻ ՏԻՄԻ ԽԱՆ  
ՊԵՏՐՈՎԻ ՊԵՍՏԱՆՑԵԱՆ

**ՄԱՏԵՎԱԴՐԱՆԻ**  
Թիւ

Phi.

19.

## Գուրեազ

Ապու ու մայդաք ներմարս մէջ մասդազ ին Ֆըոր լիքիցած  
յուղ և հանգրայիշած ցըմի տառանահներ դաւաս ըլույ ու  
առ կիւր ճնի մաշակ և ներբե մաս ոց անք մայդաք ուղարկած  
ողանում դաշոյ մադմ ներմարս մէ բաւոյի Ֆըոր մանա  
կանու բայ պայմանաւոյչայ ուղարկած լու և ողանում նախաց  
ու մասդա վամանուր Ֆըոր մանա մէ աւատուր մայստիք  
ուղարկարան մէ ցնոր մարտիք մայստիք առ լաւացած  
ու դաւուայն մէ Հսիր ինչ է կրկնում ձայնը.  
թէ արգարութիւն ես սիրում—  
Ապա Բամբի՛ր ձիդ աշխումով  
օթէ արգիւլ ես մատում—  
Դիր զնւան ուղարկում ու պար  
թէ արգարն ասկելու կս ընդունակ  
Սլացիր առաջ արծուից արագ.  
Եւ Միրզ Շափֆին երգում է.  
Մարակիր նրան ով ստում է:  
ԲՈՒԺՆԵՑԼԵՇՑ

(Միրզա Շահենի երգերից)

Ճանապարհորդիքը, Ընթերցող, Ռէյս, Սիլէզիա, Սաք-  
սոնիա, կամ մեր գեղեցիկ հայրենիքի որևէ մի տեղը և գու  
ամենուրեք կը հանդիպես կիսամերկ, բոկուսն, ներս ընկած  
աչքերով մարդկանց. հարցնելով նրանց մասին, դու կիմա-  
նաս, որ նրանք բոլորը՝ աշխատող սշակներ են և որ այդպի-  
սի անբախտներ հազարաւորներով գոյութիւն ունեն ամեն  
տեղ, թէ գիւղերում և թէ քաղաքներում. Իսկ զանազան  
հաստատութիւններում ծառայող չինովնիկների ահագին  
մեծամասնութիւնը կարծում էք որ լաւագոյն կեանքի պայ-  
մաններ ունեն քան այսպէս կոչւած «ազատ» աշխատա-  
ւորների ստւար մասսաները:

Բոլոր այդ չինովինիկները ստիպւած են վաղ առաւտ-  
տից աշխատել մինչև ուշ գիշեր, առանց մի բոպէ ձեռքերը ծա-  
լելու, մանաւանդ մանր չինովինիկները, որոնք իրանց ար-  
դարև տաժանակիր աշխատանքի համար ստանում են մի  
խղճուկ վարձ: Եւ որքան որ բարձր դիրք ունենայ չինով-  
նիկը, այնքան էլքիչ կաշխատի և այնքան աւելի շատ կըս-  
տանայ: Ինչպէս յայտնի է, նրանց մէջ կան այնպիսիները,  
որոնք ահազին ուոճիկներ են ստանում և համարեա թէ ո-  
չինչ չեն անում:

Այժմ, ընթերցող, դառնանք արհեստաւորներին։ Նըա  
բանցից շատ քէներին և յաջողւուծիրանց համար ճանապր

հարթել. գուցէ մի քանիսին չեն սպանում կարիքն ու հոգո սը, բայց ստւար մեծամասնութիւնը հարկադրւած է կռւել կարիքի դէմ, որը նրան ճշշում է այնքան մեծ ոյժով, սամեն ըոպէ վտանգ են սպառնում նրան խոշոր ձեռնարկութիւնները և արիւնուուշտ վաշխառուները. այդ ամենը միասին, պատրաստ են ամեն լոպէ կործանել նրան և ոչնչացնել նրա սեփական փոքրիկ գործը: Եւ հազարաւորներ նրանցից, ընկել են և ընկնում են անհաւասար ու սոսկալի այդ կռւում և կորցնելով իրանց անկախութիւնը լցնում են «ազատ» բանորների շարքերը: Արհեստը վաղուց է դադարել գոսկի ապարանջան» լինելուց. բաւական է մի մեծ գործարանատէր, որպէսզի կործատեան մատնւեն հարիւրաւոր և հազարաւոր մանր արհեստաւորներ: Գործարանատէրը զրկելով նրանց աշխատանքից, զրկում է հետևապէս եւ գոյութեան միջոցներից: Ներկայումս միայն նա կարող է տանել այդ սոսկալի կը ոիւը, ով որ շրջանառութեան մէջ կը դնէ խոշոր կապիտալ և մեծ միջոցներ: Այդքան ուժեղ է արդիւնաբերողների մրցումը: Լաւ չէ գնում գործը նոյնպէս առևտրի մէջ: Այստեղ էլ մանր առևտրականները վատ դրութեան մէջ են, մինչդեռ խոշօր առևտրականները ահագին հարըստութիւններ են ձեռք բերում: Այժմ, եթէ մենք նայելու մինենք գիւղեցը, այստեղ էլ կը տեսնենք, որ մանր գիւղացին անհաւատալի ջանքեր է գործ դնում ծայրը ծայրին հասցնելու և վերջնական քայլքայումից զերծ մնալու համար: Մանր գիւղացու գրութիւնը կարճառօտ կերպով որոշելու համար, կասենք, չատ քիչ երջանիկ տեղերի բացառութեամբ գիւղացին ամենուրեք աղքատանում է: Այստեղ գործում է վաշխառուն, որը ճարպիկութեամբ օգտաւելով անքերը իւնիւնից, ահագին օգուտներ է ստանում: Եւ մենք աւելի ու աւելի յաճախ տեսնում ենք, որ շատ ու շատ կալվածներ ընկնում են մէկ մարդու ձեռքը և մանր գիւղացիները աւելի ու աւելի յաճախ են ծախում իրանց հողը խոշոր կալւածատէրերին: Եւ միմիայն խոշոր կալւածատէրն է, որ կարողանում է հաստատապէս շահ դուրս բերել նրանցից և օգտաւել:

Այժմ, ընթերցող, դու տեսնում ես, որ ինչքան էլ մարդ ջանասիրութեամբ աշխատի, տքնի, միևնոյն է նա չի կարող խոյս տալ կարիքից, դառնութիւնից, հոգսերից և

հարստութիւն ձեռք բերել. սակայն ինքն է ստեղծագործում այն բոլոր հարստութիւնները, որոնց տիրում են անփորձ մարդիկ. կամ նրանք, որոնք այնքան չնշին ու. փոքրիկ աշխատանք են թափում, որ այդ մասին խօսել իսկ չարժէ.

Գործունեայ աշխատաւորը հազիւ իր գոյութիւնն է պահպանում, իսկ ոչ մի գործ չը կատարողները կամ որևէ մի անօդտակար գործ կատարողները սեփականացնում են բոլոր հարստութիւնները. արդարացին է այդ. ի հարկէ ոչ:

Անգլիական կառավարութիւնը հաշւեց, թէ ամբողջ ժողովրդական եկամտից որքան է հասնում չաշխատողներին և որքան աշխատողներին. երեաց, որ անգործ փոքրամասնութիւնը վերցնում է կէսից աւելին, իսկ մնացեալը՝ բաժին է ընկնում աշխատողներին, այսինքն համարեա թէ Անգլիայի ամբողջ ժողովրդին:

Գերմանիայում էլ միևնոյն է և այդ բանում նա ոչնչով չի տարբերում Անգլիայից. եթէ կայ մի զանազանութիւն, այդ այն է, որ գերմանական կառավարութիւնը տարաբախտաբար այդպիսի հաշիւներ չի ներկայացնում:

Ի՞նչպէս կարելի արդարացնել իրերի այսօրինակ գըրութիւնը. միայն նա, ով սրտի փոխանակ քար ունի իւր կրծքում, կարող է արդարացնել ժամանակակից դրութիւնը. եւ որքան ուզում են, թող անիծեն սօց.-դէմօկրատներին, սրանք իրաւունք ունեն. Իրերի այդպիսի կարգ չի կարող և չը պէտք է լինի. անարդար է այն. հարկաւոր է փոփոխել նրան: Սօց.-դէմօկրատները չեն կաւում այն ըստացւածքների դէմ, որոնք արդիւնք են արտադրողական աշխատանքի. ընդհակառակն, նրանք այդպիսիներին իրանց հովանաւորութեան ներքոյ են առնում և պաշտպանում այն մարդկանց ոտնձգութիւնից, որոնք ոչինչ չանելով ուզում են սեփականացնել ուրիշի աշխատանքի արդեանց մեծամատնութիւնը: Սօց.-դէմօկրատները այդպիսով կոյւ մղելով այն ամենի դէմ, որ հնարաւորութիւն է տալիս շահելու առանց որևէ աշխատանքի, ձեռք են բերում աշխատողների սեփական աշխատանքի արդիւնքի ապահովութիւնը:

Բայց սօց.-դէմօկրատները իրանց այդ ձգտման մէջ շատ հեռու չեն գնում արդեօք: Ի հարկէ շատ լաւ կը լինէր, եթէ ստիպէին անգործներին համահաւասար չափով

աշխատել և այդպիսով ազատել բոլոր բանւորներին կարիքից ու հոգսերից։ Այդ շատ ցանկալի կը լինէր, մանաւանդ որ սօց դեմոկրատները, համարեա սեփականութեան թշնամի են, չէ որ նրանք մինչև իսկ յարձակում են այն սեփականութեան վրայ, որոնք ձեռք են բերւած սեփական, զուցէ և մեծ աշխատանքով։ չէ որ սօց դէմոկրատները — կոմմունիստներ են։

Դրանք շատ լուրջ առարկութիւններ են և պահանջում են մանրակրկիտ ու հանգիստ քննութիւն։

Այդ պատճառով, ամենից առաջ պարզենք թէ ինչ բան է կոմմունիզմը և ինչ՝ մասնաւոր սեփականութիւնը։

Բայց նուխ քան այդ հարցերի քննութեան անցնելը, նախնական մի նկատողութիւն անենք։ Բանը նրանուն է, որ մարդիկ մեծ յօժարութեամբ են վիճում այն դէպքում, երբ նրանք տարակարծիք են լինում որևէ հասկացողութեան որոշման վերաբերմամբ։ Երբ հարց է ծագում, թէ ո՞ր մէկ հայեացքն է արդարացի, այն ժամանակ մարդիկ զայրանում են և անվերջ վիճում, եթէ մինչև իսկ այդ խնդրում շահագրգուած էլ չը լինեն։ Արդպիսի վէճեր շատ յաճախ են պատահում։ բաւական է յիշատակել պատկերամարտները, (ԱԿՈՆՈԲՈՐԸ) անարաբտիստները, կամ Յովհ։ Լէյդենի աղանդը, ներկայումս նոյնն էլ տեղի չունի արդեօք «կօմմունիզմի» մասին։ Զաշխատող և միմիայն հարստութիւն դիզելու ետևից ընկած մարդիկ այնքան ստեր են տարածել կոմմունիզմի մասին, որ մարդկանց մեծամասնութիւնը համարում է կօմմունիստին ամենաստոր ու վատթար։ Հենց որ սկսում ես կօմմունիզմի մասին խօսել, զգում ես, որ կանխաւ զատապարտած ես. բոլոր խօսքերը ոչ լսում են, ոչ թափանցում նրանց խորքը և ոչ մտածում նրանց վրայ, այլ պարզապէս աղաղակում են «անիծեալ լինի»։ Յայտնի Ֆերդինանդ Լասսալի երեսին, մէկը բղաւեց մի անգամ. «դուք սօցիալիստ էք»։ (Սօցիալիստ և կօմմունիստ իսկական իմաստով, միենոյնն են) նակամեցաւ այդ խօսքով վերջնականապէս ոչնչացնել Լասսալին, ըստ որում այդ բառը նախապաշարել էր հասարակութիւնը սօցիալիստական ձգտութերի դէմ։ Իսկ այդպիսի նախապաշարութերը առաւել ուժեղ են քան կրօնականները։

Ահա թէ ինչու, այդպիսի դէպքերում, այնքան դժւար է խօսակցել և որևէ համաձայնութեան գալ:

Ընթերցնող, դու, որ մինչև այժմ հետևեցիր իմ դատութիւններին, չես սկսի ի հարկէ անիծել կօմմունիստներին, այլ լուրջ ու սառնարիւն՝ կը զբաղւեմ այն հարցը քննութեամբ, թէ ինչ է կոմմունիզմը:

Եթէ ուշադրութեամբ մեր շուրջը նայելու լինենք, իսկոյն կը նկատենք մի ամբողջ շարք օգտակար հաստատութիւններ, որոնք շինւած են հասարակութեան բոլոր կամ շատ անդամների ձեռքով: Մի տեղ մարդիկ խմբւում են մի հասարակութեան մէջ, նաւարեկեալներին ազատելու, մի ուրիշ տեղ ուսումնարաններ շինելու, մի երրորդ տեղ՝ խըճուղիններ շինելու և այլն: Մարդիկ ոռվորաբար միայն իրանց անձի մասին են մտածում, բայց վերոյիշեալ դէպքերում, միութիւններ են կազմում հասարակական նպատակների համար: Եւ փորձառութիւնը վաղուց ցոյց է տւել, որ այդօրինակ միութիւնները չափազանց մեծ օգուտ են բերում մարդկանց և ամեն մէկը որ քիչ թէ շատ ընդունակ է դատելու, կասէ, որ նրանք նպաստում են իւր սեփական յաջողութեան: Ի՞նչ պէտք է անէին մարդիկ, եթէ չը լինէին հասարակական ջանքերով ձգւած երկաթուղին, կամ ընդհանուրի հաշուով հաստատւած ուսումնարանները (չը նայելով որ վերջինները, ներկայումս, շատ անգոհացուցիչ են և սակաւաթիւ) կամ որքմն վատ կըլինէր մեզ համար, եթէ չը լինէին ապահովագրական ընկերութիւնները, որոնք այսպէս ասած, ունեն որպէս միակ նպատակ, հրդէից հասած վնասների ծանրութիւնը բաժանել շատ մարդկանց վերայ, առանց որի՝ ամբողջ թշւառութիւնը կը բարդէր մէկ մարդու վերայ և թերևս կը տանէր վերջնոյս դէպի ի վերջնական կործանումն: Եւ այդպիսի հազարաւոր հաստատութիւններ կան: Այդ ընկերութիւնների օգատակարութիւնը պարզ է նրանք բոլորը ներկայանում են որպէս մասն սօցիալիզմի, որովհետև սօցիալիզմը ուրիշ բան չէ եթէ ոչ շահերի ընդհանուր լինելու սկզբունքը:

Առօրեայ կեանքում, ամեն մարդ փնտում է իւր սեփական շահը և յաճախ կամ համարեա միշտ միմիայն դըրան է ձգտում, առանց ուշադրութիւն դարձնելու մերձաւ

Առների շահի վրայ. այստեղ տիրապետում է սառն, նող-կալի, ակներև եսասիրութիւնը:

Ոստայնանկութեան մեծ գործարանները, աղքա-  
ռութեան դուռն հասցըին հազարաւոր մանր ջուլ-  
հակների: Բայց կայ մէկը, որ անհանգիստ լինի այն  
մասին, թէ մի գործարան կարող է մուրացկան դարձ-  
նել, ուժեղ, ջանասէր և երջանիկ մարդկանց մի ահազին  
բազմութիւն: Ո՞վ է վրդովում որ մի կօշկի գործա-  
րան, կորստեան է սատում անթիւ մանր անկախ կօշ-  
կակարներ: Միթէ վաշխառուն հետաքրքրութւմ է երը և  
իցէ իւր զոհերի վիճակով: Մի որևէ ակցիօներական ըն-  
կութեան հիմնադիրները, մտածում են արդեօք ակցիօնէրների  
մասին, եթէ վերջինները կորցնեն իրանց երբեմն ահազին  
ջանքերով ձեռք բերած կարողութիւնը: Ոչ, ոչ ոք, ոչ մի  
անգամ այդ մասին չի մտածում և ես համոզւած, եմ որ  
ծաղրի կենթարկէին այն մարդուն, որը իւր մերձաւորների  
գրութեան վրայ ուշագրութիւն կը դարձնէր: Այստեղ բա-  
ցի եսասիրութիւնից ոչինչ գոյութիւն չունի: Իւրաքանչիւ-  
ը միմիայն իւր մասին է մտածում, առանց ի նկատի ու-  
նենալու ուրիշների շահերը. «ինչիս են պէտք ուրիշները, մի-  
այն թէ ես հանգիստ լինեմ»:

Բայց չը նայելով եսասիրութեան տիրապետութեան,  
մարդկային շահերի ընդհանրացումը անընկճելի ոյժով ա-  
ռաջ է գնում, և գնալով, աւելի լաճախակի կազմում են  
խմբութեր յօգուտ ընդհանուր գործի. սոսկալի արագու-  
թեամբ աճում են միութիւնները, պետութեան և հա-  
մայնքների գործունէութիւնը հետզհետէ աւելի ուժգ-  
նօրէն, աւելի մեծ տարածութիւններ է գրաւում: Ո՞վ  
կարող էր նախատեսել, որ այդքան մեծ քանակութեամբ  
գանագան բնկերութիւններ գալու են բաւարարութիւն տա-  
լու հասարակութեան այլ այլ և պահանջներին: Ո՞վ կարող  
էր նախատեսել, որ բոլոր երկիրները կապւելու են իրար  
հետ երկաթուղիներով կամ հեռագրաթելերով, որոնց շնոր-  
հիւ մեր մտքերը պիտի փոխանակէինք ամենահուաւոր  
տարածութեան վրայ, այն էլ ամենաանհաւատալի արագու-  
թեամբ: Ո՞վ կարող էր երևակայել այնքան սաստիկ ու արագ  
աճող պօստը որը ընդհանուր և արդարացի հիացմունք պի-  
տի պատճառէր: Միթէ կարելի էր երևակայել գազային լու-

աւորութիւն ու ջրանցքներ. (водопроводы) մի կարող էր մտածել ժամանակակից հրդեհաշխջութեան մասին: Եւ սակայն, այդ բոլորը սօցիալիզմի մի մասն են ևազմում: Մէկ խուզքով, չը նայելով ամենուրեք լիակատար կերպով տիրող եւ սասիրութեան և անխնայ կռւին, մարդկային շահերի հասարակականացումը ճանապարհ է բաց անում իւր համար:

Յօգիւած ընդհանուրի ի միասին գործ դրւած աշխատանք—ահա այս է մեր ժամանակի բնորոշ գիծը. մի գիծ, որ օրէցօր առաւել պայծառ գոյնով է երկան գալիս: Թողէ անէծք կարդան սօցիալիզմին: անիծողները իրանք են որ գնում են դէպի նրան. ամենուրեք և միշտ հասարակական շահերը առաջին պլանն են անցնում և սօցիալիզմը, հակառակ այն անարդանքին ու ծաղրին, որին նա ենթարկւում է, կատարում է իւր յաղթական և հանդիսաւոր առաջխաղացութիւնը, շօշափելով գոյութիւն ունեցող բոլոր մարդկային յարաբերութիւնները:

Սօցիալիզմին ինքնիրան թշնամի յայտարարողը, շահերի հասարակականացման, հետևապէս եւ մարդկութեան թշնամին է: Ուրեմն և թող նա ոչնչացնէ ամենից առաջնասպարհները, խճուղիները, ուսումնարանները, եկեղեցիները, հասարակագր պարտէզներն ու ծառուղիները. թող ու չընչացնէ բազանիները, թատրոնները, դազային խողովակները, ոռոգման միջոցները, թող նա ոչնչացնէ հասարակական շէնքերը, վարչական հաստատութիւնները, դատարանները, բոլոր հիւանդանոցներն ու բարեգործական նիմունարկութիւնները, երկաթուղիները, հեռագրական թելերն ու պօստը. այդ բոլորը բնացինջ անելով, նա կոչընչացնէ եւ սօցիալիզմը. որովհետև բոլոր այդ հաստատութիւններն ու յարմարութիւնները պարունակում են իրանց մէջ սօցիալիզմի սաղմերը որոնք նրա մի մասն են:

Ինչպէս որ եսամիրութիւնը բնատուր է մարդուն, այնպէս էլ սօցիալիզմը յատհեկ է նրան: Այդ իսկ պատճառով, անհնար է ոչնչացնել սօցիալիզմը: Ամենքի համար պարզ է այդ: Մէնք արդէն մասամբ կօմմունիզմի մէջ ենք ապրում, և արագութեամբ սլանում ենք դէպի նրա թագաւորութիւնը: Հեռու չէ այն երանաւէտ օրը, երբ հասարակական շահը կանցնի բոլոր մարդկային յարաբերութեանց ուսումնանուրի օգուտը սահման կը դնէ եսաւուին և երբ բնդհանուրի օգուտը սահման կը դնէ եսաւուին:

սիրութեան։ Հարուստ ալիւրավաճառը կապալով վերցնում  
է ամբողջ երկաթուղիներ և նրանց վրայով ճանապարհում  
է դատարկ վագօններ որպէսզի ալիւրը չը զնայ այդտեղ,  
որտեղ ամենից աւելի հացի կարիք է զգացնում։ այդ տե-  
ղերի ընակչութիւնը ստիպւած է լինում կամ ահագին փող  
վճարել այդ շահագէտին և կամ սովամահի դատա-  
պարտւել։ Ալիւրավաճառը օգտւում է ժողովրդի աղքատու-  
թիւնից, որպէս զի մեծացնէ իւր առանց այն էլ ահագին  
հարսառութիւնը, իսկ գները ընկնելիս գերազաս է համարում  
փթեցնել իւր ապրանքը, քան թէ արժան զնով ծախել։  
Այս բոլորը միթէ չեն հանդիսանում իրեն սովորական կար-  
գեր։ բայց և այնպէս, պարզ է ամենքի համար որ այդպիսի  
եսասիրութիւնը մասսում է հասարակութեան։ Եւ կը զայ  
մի օր, երբ մարդիկ կարող կը լինեն բոլոր մարդկանց շահե-  
րը հակադրել առանձին մարդկանց եսասիրական շահերին։  
Հասկանալի է որ ամենքի համար, բացի ուրիշների հաշ-  
տով ապրողներից, անհամեմատ լաւ կը լինի այդ։

Դրա դէմ ոչինչ չունենք—կասեն ընթերցողն երից  
ոմանք, եթէ այդ տեսակէտից նայելու լինենք, ապա ուրե-  
մըն մենք ամենքս էլ—սօցիալիստ ենք։ Բայց այստեղ հար-  
ցը այդ տեսակ կօմմունիզմին չի վերաբերում, այլ նրան,  
որը ուզում են իրագործել սօց։ դեմոկրատները, այսինքն սե-  
փականութեանց հասարակականացման։ Հարստութեան բա-  
ժանումը թող չը լինի, բայց չը որ յամենայն դէպս սեփա-  
կանութիւնը ոչնչանալու է, և հենց այդ բանն է, որ մեզ զի-  
նում է սօցիալիզի դէմ։

Բայց նախ հարց տանք—իսկապէս սօց։ դեմոկրատ-  
ները կամենում են ջնջել մասնաւոր սեփականութիւնը,

ի՞նչ բան է սեփականութիւնը—այն որի տէրն է մար-  
դը—շատ լաւ։ Այժմ, ասացէք ինդրեմ, սօց։ զեմօկ-  
րատները երբ դուրս եկան Պետրի կամ Իվանի ունեցածի  
դէմ։ Սօցիալիստական մի արտադրութեան ժամանակ երբ  
և իցէ դուք տեսել էք որ յարձակւած լինեն առանձին ան-  
ձերի սեփականութեան վրայ։ Այնուամենայնիւ այդ ընական  
կը լինէր։ բաւական է քննել թէ այս կամ այն մարդ ինչպէս է  
ձեռք բերել իւր կարողութիւնը, եզրակացնելու համար որ նա  
չի պատկանում իւր տիրոջը։ Օրինակներն աւելորդ են, ամեն  
մարդ իւր սեփական փորձառութեան թող դիմէ։ Սակայն

սօց. դեմօկրատները երբէք չեն պահանջել՝ քննութեան ենթարկի առանձին անհատների իրանց կարողութեան վրայ ունեցած իրաւունքը, երբէք նրանք չեն պահանջել սեփականութեան յարաբերութիւնների այս կամ այն կանոնաւորումը, երբէք և ոչ մի տեղ՝ այդ տեղի չէ ունեցել ։ Նա որ սօց. դեմօկրատներին այդպիսի բաներ է վերագրում, կամ ծանօթ չէ ինդրին և կամ բացարձակապէս ստում է։ Սօց. դեմօկրատները լաւ գիտեն որ առանձին անձերի ինչ ձեւով իրանց հարստութիւնը ձեռք բերելու քննութեամբ զրադւելը, անօգուտ և անկարևոր մի աշխատութիւն է։ Եւ նըրանք դրանով չեն էլ զբաղւի։ Նրանք չեն նախանձում պ. Ռուշիլդին և նրանց չի հետաքրքրում թէ ինչ չափերի է հասել պ. Ֆօն-Բլէյխրէդէրի և «բարեկամներ»-ի հարստութիւնը։ Սօց. դեմօկրատները, ի հարկէ, անխոնջ կիրպով հետեւում են հասարակական յարաբերութիւնների անընդհատ փոփոխութիւններին և աշխատում են թափանցել նրանց մէջ, ըմբռնել նրանց պատճառները։ Նրանք լաւ գիտեն որ ալդպիսի փոփոխութեանց հիմնական պատճառները՝ անարդարութիւնն ու բռնութիւնն են և չը նայելով դրան, սօց. դեմօկրատները ոչ մի անգամ չեն մտածել այն պատճառների մասին, որոնք ազդեցութիւն են թողնում առանձին անձերի սեփականութեան դրութեան վրայ։ Վերջիններիս սեփականութեան դրութիւնը սօց. գեմոկրատները համարում են որպէս փաստ։ Նրան յարգանքով են վերաբերում։ Եւ յարգանքը դէպի անհատական (առանձին անձի պատկանող) սեփականութիւնը այնքան մեծ է, որ գողութեան վրայ նրանք նայում են, որպէս մահւան պատժի արժանի մի գործողութեան վրայ։ Յեղափոխութեան տիրապետութեան ժամանակ, Փարիզի ըոլոր փողոցների անկիւններում կպցրած էին յայտարարութիւններ («մահ գողերին») բովանդակութեան պատճառները։ 1832 թւի բանւորական ապստամբութեան ժամանակ, Լիօնում, ապստամբներից մէկը սպանեց մի մարդու, որը իւրացընել էր ուրիշեսեփականութիւնը։ 1871 թւին, Փարիզի ներկայումս այնքան անարգւած կօմմունայի տիրապետութեան ընթացքում, այդ վիթխարի և գեղեցիկ քաղաքում չէին երևում ոչ գողեր և ոչ պոռնիկներ։ Հետաքրքիր է այն որ հէնց որ Փարիզի փողոցներում երևացին յիշեալ յայտարարութիւ-

ները, նշանաւոր Ռոտշիլդը շտապով խոյս տւեց այնտեղից: Իսկապէս ներկայումս՝ լիովին նւիրական չի համարւում մասնաւոր սեփականութիւնը, բայց սօց. դեմոկրատները այդտեղ մեղաւոր չեն: Նրա ոչնչացումը, երբեմն ոչ միայն օգտաէտ է, այլ մինչև իսկ անհրաժեշտ: Ինչպէս օրինակ, երկաթուղու գիծը անցկացնելիս կամ խճուղի շինելիս. բայց այդ գէպքում ևս, սօց. դեմոկրատները չեն որ ուղարկում են դատական գործադիր իշխանութիւններին, վաճառելու որևէ է կարեռը տնային իր, ի հաշիւ ցանքսի համար արւած մի փոխառութեան կամ առնելիքի: Սօց. դեմոկրատները չեն նոյնպէս որ արդարացնում են, մեր ժամանակներում գոյութիւն ունեցող, ուրիշի սեփականութիւնը իւրացնելու գործողութիւնները, որոնք պարզապէս անիրաւացի են՝ բայց հիմնաւած են կատարւած իրաւաբանական ձևականութիւնների վրայ:

Միայն մի բանի դէմ է որ ըմբռսաւանում են սօց. դեմոկրատները: Նրանք չեն կուռում մի մարդու հարիւր հազարներ կամ միլիօններ ունենալու հնարաւորութեան դէմ: Իւրաքանչիւրը կարող է հարիւր հազարներ և միլիօններ վատնել օգտակար կամ անօգուտ կերպով, այդ չէ որ հետաքրքրում է սօց. դեմոկրատներին, թէև երբեմն այդ մասին էլ մտածելը՝ աւելորդ չէր լինի: Բայց բանը նրանումն է, որ այդ հարիւր հազարներն ու միլիօնները ծառայում են որպէս մրջոց իրանց տէրերին, նորանոր հարստութիւնների համար, որոնք աճում և բազմապատկւում են մինչև իսկ այն դէպքում՝ երբ նրանց սեփականատէրը դրականապէս ոչինչ չի անում և նրանց շատացման համար մատը մատին անգամ չի խփում. այդ հարիւր հազարներն ու միլիօնները ներկայանում են որպէս կամուրջ, որի վրայով շատ մարդկանց ծանր ու դառնադին աշխատանքի պառուղներն անցնում են մի բուռն երջանիկ մարդկանց ձեռքը, այն սոսկ պատճառով որ վերջիններս արդէն հարուստ են: Կարճ խօսքով կարելի է այսպէս ասել. — Այդորինակ սեփականութիւնը դասնում է կապիտալ և դրա դէմ է որ կուռում են սօց. դեմոկրատները: Հարստութեան կապիտալ դառնալու յատկութիւնը, սեփականութեան կապիտալիստական բընաւորութիւնը և սրանից բղխող, ուրիշի աշխատանքի պատճենների՝ անգործների՝ ձեռքն անցնելու հնարաւորութիւ-

Նը, ներկայումս գոյութիւն ունեցող բաժանման եղանակը, որի շնորհիւ մեծագոյն մասը համառմ է ոչինչ չանողներին, մինչ ամենայամառ և ծանրագին աշխատանքը գործ լնող ներին համառմ է այնքան, որքան անհրաժեշտ է ամենակենսական պահանջներին բաւարարութիւն տալու համար, ամբողջ ժողովրդի սոսկալի աղքատութիւնը և սակաւաթիւ մարդկանց անչափ աճող հարստութիւնը, ահա թէ ինչումն է բանը: Մեռեալ սեփականութիւնը տիրում է կենդանի աշխատանքի պառազներին և որովհետեւ կենդանի աշխատանքը իւր արդիւնքի սեփականացման անվիճելի իրաւունքն ունի, այդ պատճառով մեռեալ սեփականութիւնը—թշնամի է կենդանի սեփականութեան:

Այստեղ տեղի է ունենում աշխատանքի և կապիտալի կոխւը:

Այժմ՝ վերոյիշեալ հարցը թէ—«Ի՞նչ բան է սեփականութիւնը», պէտք է քննել մի ուրիշ կողմից ևս: Առաջ մենք նրան բնորոշեցինք այսպէս: «Սեփականութիւնը այն բանն է՝ որի տէրն է մարդը»: Այդ սահմանումը բաւականչափ լիսակատար չէ, միակողմանի է. այժմ հարկաւոր է քննել այն կարեոր հարցը թէ նում պէտք է պատկանի աշխատաւորի ստեղծածր: Ներկայումս կէսից աւելին բաժին է ընկնում մեռած կապիտալին, իսկ աշխատաւորը—լինի նա վարձկան բանւոր, չինովնիկ, արհեստաւոր կամ գեղջուկ, մեծ մասամբ ստանում է այնքան, որքան հարկաւոր է սովամահ չը լինելու համար: Այդ յաւիտեան աշխատող մեղուները, իրանց ստեղծած արժէքների միայն փոքրիկ կէմն են ստանում: Նրանք զրկւած են մինչև իսկ ժամանակակից քաղաքակրթութեան բարիքներից օգտւելու հեռաւոր յոյսից:

Բայց ուրիշ ի՞նչ կարող է նրանց պատկանել, եթէ ոչ իրանց սեփական աշխատութեան արդիւնքը, բանւորների, չինովնիկների, արհեստաւորների կամ գիւղացիների ստեղծած արդիւնքների մեծ մասին, ի՞նչ իրաւունքով է տիրանում մեռեալ կապիտալը: Ի՞նչի վրայ է հիմնում այդ իրաւունքը: Ի՞նչնիվ է այդ իրաւունքը զանազանում ճորտափրոջ՝ իւր ճորտերի աշխատութեան վրայ, կամ աւատների՝ գիւղացիների աշխատութեան վրայ ունեցած ի-

րաւունքից, Այստեղ զանազանութիւնը միայն ձեր մէջն է և ուրիշ ոչինչ:

Ճորտութիւնը—անարդարութիւն է. ճորտատիրական իրաւունքը—անարդարութիւն է. Կապիտալիստական սեփականութեան իրաւունքը, ուրիշի աշխատանքի արդիւնքի վրայ, նոյնպէս անարդարութիւն է. Ընկան երկու անարդարութիւնները—ճորտութիւնն ու ճորտատիրական իրաւունքը կընկնի եւ երրորդը—կապիտալիստական սեփականութեան իրաւունքը: Նրա տեղը կը գրաւէ, աշխատաւորների իրանց սեփական աշխատանքի արդիւնքի վրայ ունեցած բընական և հետեւաբար նսիրական իրաւունքը:

Աշխատանքն ու կապիտալը կը կանգնեն դէմ առ դէմ, որպէս երկու թշնամի բանակներ և նրանց միջև տեղի կունենայ մօտաւորապէս հետեւեալ խօսակցութիւնը:

Կապիտալ.—Աշխատանք, ըստ արդիւնքի մեծագոյն մասըն եմ պահանջում, որսվնեաւ ես քեզ համար անհրաժեշտ եմ:

Աշխատանք—դու, կապիտալ, ինձանով ես ստեղծւած և դու ինքդ իմ սեփական արդիւնքն ես, բայց թող քո տէրերը օգտւեն քեզանից, միայն թէ իմացիր որ եթէ դու կըկին կը վիճես իմ նոր արտադրածի մասին, այն ժամանակ ես քեզ ամբողջովին կը պահանջեմ, ըստ որում դու իմ զաւակն ես, ինձանից ես ծնւել: Բոլոր իմ նորագոյն ստեղծածները թնդ ինձ, նրանք ինձ են սլատկանում:

Ասա այժմ, ընթերցնե, միվ աւելի համեստ է և արժանի մեր համակրանքին: Սօցիալ-դեմոկրատները կենդանի աշխատանքի կողմն են, և նրա սեփականութեան իրաւունքն են պաշտպանում: Միթէ նրանք իրաւացի չեն:

Միթէ աշխատել չուզողը՝ իրաւունք մենի օգտւելու ուրիշի աշխատանքի արդիւնքով: Ով հիւանդ չէ կամ հաշմանդամ, կարող է և պէտք է որ աշխատի:

Կապիտալի (թէկուզ աշխատանքով ձեռք բերած) և վաստակը արդարացնելու համար, մէջտեղ են բերում ձեռնարկողների բիսկը. չէ՞ որ նա կարող է ամեն ըոպէ կորցնել իւր կապիտալը: Բայց ասացէք ինդրեմ, աշխատանքն ի՞նչ բան ունի այստեղ, միթէ այդ չի՞ առաջանում ձեռնարկողների իրար հետ ունեցած անընդհատ կուից և կամնրանից, որ կապիտալիստը չի կարող իմանալ թէ իսկապէս պահանջւեմ է այն, ինչ որ

ինքը հրամայում է արտադրել. թող որ կապիտալիստները, կապիտալիստների դասակարգը, ոչնչով չեն վտանգւում, որովհետև նրանց հարստութիւնները աճում են ամեն օր: Իսկ բանւոր դասակարգը միթէ չէ ենթարկում իրան վըտանգի և այն էլ մեծ վտանգի: Երբ արտադրութիւնը կանգ է առնում, երբ վարձագինը ընկնում է, և բանւորական մասսան անզործ է մնում և երբ այդ պատճառով դժւարին դրութեան մէջ են ընկնում նոյնաէս մանր արհեստաւորը, առևտրականը, երբեմն և զիւղացին—այն ժամանակ բանւոր մարդկանց կացութիւնը չափազանց ծանր է դառնում և շատերը ուղղակի քաղցի են դատապարտում. միթէ քիչ ենք լսում սովատիֆի մասին. և արդարեւ, այդ չը ըիսկը:

Ի՞նչ պէտք է անել իրերի այսօրինակ դրութիւնը փոխելու համար:

Նախ քան այդ հարցի քննութեան անցնելը, պէտք է նկատել որ այդ փոփոխութիւնը չի կարող միանգամից՝ մի օրում տեղի ունենալ. ինդիրը՝ բնական անհրաժեշտութիւնից բղխած, աստիճանական զարգացման մասին է: Այդ քանը սօց. դեմոկրատները ներկայացնում են մօտաւորապէս այսպէս:

Կար ժամանակ, ոչ այնքան հեռու, երբ միջին դասակարգը հանդիսանում էր որպէս գլխաւոր հիմք պետութեան ինչպէս և հասարակութեան: Մեքենաների գիւտը սկիզբ դրեց խոշոր արդիւնաբերութեան և խոշոր հողագործութեան: Միջին դասակարգը տիրոջից դառնում է վարձու բանւոր. վարձու բանւորները միանում են արտադրութեան միջոցով. միջին դասակարգը զրկւելով իւր սեփականութիւնից, կորցնում է իւր ինքնուրոյնութիւնը. և այդ սեփականազըրկութիւնը կապիտալիստների ձեռքով, ներկայումս ընթանում է անսովոր արագութեամբ. մանր արհեստաւորն ու գիւղացին աւելի ու աւելի դժւարութեամբ են պահպանում իրանց դիրքը: Միջին դասակարգի նւազումը և վարձու բանւորների շատացումը, տանում են դէպի կապիտալիստների քանակի նւազեցումը որով և ահաղին հարատուրինը հաւաքրում է ռակապին ճեռքերում: Եւ երբ մի կողմէց խոշոր կապիտալիստների նւազումը, իսկ միւս կողմէց կապիտալիստների աճումը կը հասնեն իրանց ծայրագոյն կէտին, այն ժամանակ, հասարակութեան մէջ գոյութիւն

ունեցող ներհակութիւնը՝ անտանելի կը դառնայ բանւորական մասսայի համար, և սա՝ վերջ կը տայ ժամանակակից հասարակական կարգերին։ Ահա այդ ժամանակ կը գայ սօցիալիզմի թագաւորութիւնը։ Աշխատանքը կը դառնայ հասարակական, գործը կը բաժանէի որոշ պլանով և որովհետև այդ բանի համար հարկաւոր կը գան բոլոր աչքի առաջ եղող հաստատութիւնները—հողը, գործարանը, մեքենան և ալին, ապա ևնրանց սակաւաթիւ տէրերը կը զրկւեն իրանց կապիտալներից։ Կարող է պատահել որ կապիտալիստները իրանց յօժար կամքով կը զիջեն իրանց հարստութիւնը, այդ դէպքում նրանց կօմմունիստական վարմունքը հարկ եղածին պէս կը գնահատէի ու կը վարձատրէից Բայց եթէ նրանք, յենւելով գոյութիւն ունեցող պետութեան վրայ կըսկսեն դիմադրել այն ժամանակ նրանք կը կորչեն, նորակազմ պետութեան ոյժի հետ տեղի ունեցած կուռմ։ Նոր հասարակական կարգերի օրով, աշխատանքը կը բաժանէի լաւագոյն և ճշգրիտ մտածւած յատակագծի համեմատ, ճիշտ այնպէս, ինչպէս ներկայումս արւում է մեծ կալւածներում, գործարաններում կամ պետական ձեռնարկութիւնների մէջ։ Այդ ժամանակ կը վերանայ անպէտք, աւելորդ աշխատանքը, և բոլորի ձեռքով կատարւած ամբողջ անհրաժեշտ գործը, կունենայ իւր մեծագոյն օգուտը։ Ամենքը պէտք է աշխատեն և ամենքի համար ժամանակ կը լինի հանգստանալու և հոգեպէս զարգանալու։ Ներքին դասակարգային կուի վերացմամբ, կը վերանան եւ ժողովուրդների արտաքին պատերազմները։ ամենքը կօմմունիստներ կը լինեն, և որպէս կօմմունիստներ՝ ամենքն էլ կաշխատեն. ընդհանուր զրութեան բարելաւման համար, որովհետև դըրանումն է կայանում բոլորի երջանկութիւնը։

Այդ՝ ի հարկէ ապագայի ընդհանուր պատկերն է, ոչ ոք չի կարող այժմնախագուշակել զարգացման ճշգրիտ և անրամասն ընթացքը, եւ այդ անհրաժեշտ չէ, բաւական է որ սօց. դեմօկրատների գիտութեան հիմնական միտքը ճշմարիտ է։ Անգլիական ինժիներ Գէորգ Ստէֆէնսընը սրանից յիսուն տարի առաջ, առաջին երկաթուղին շինելիս, միթէ կարող էր երեակայել այժմեան շողեշարժը, երկաթագծերը, կամ ազդանշանները (սիրալ)։ բայց նրա հիմնական միտքը ուղիղ էր և այդ պատճառով էլ ամբողջ աշ-

խարհը նւաճեց։ Աօց. դեմօկրատների ուսմունքը նոյնպէս կը յաղթանակէ, ըստ որումնա բովանդակ մարդկութեան շահերն է արտայայտում։ Արդարացի չէ որ շատերն աշխատին, իրանց առողջութեան գնով, միայն նրա համար որ մի բուռն անգործ մարդիկ, հաճելի և պէս պէս վայելք-ներով ճոխ կեանք վարեն։ Ոչ ոք չի համարձակւի բացասել որ աշխատանքի խելացի բաժանումը, աշխատելու պարտաւորութեան զգացմունքը և անպէտք ու աւելորդ արտադրութիւնների (օրինակ-թնդանօթներ ևայլն) ոչնչացումը, յաւիտենապէս կը բարելուեն մարդկութեան ընդհանուր դրութիւնը, կը տան նրան արժանավայել կեանք։

Միթէ նւազ շահաւէտ են ներկայումս գոյութիւն ունեցող՝ համաչափօրէն կազմակերպւած աշխատանքի ճիշդերը, Անկարելի պիտի լինէր 10 պֆ.ով մի նամակ ուղարկել Գերմանայից Աւստրիա և 20 պֆով— Աւստրիայից Գերմանիա, եթէ ընդհանուր, համաչափօրէն կազմակերպւած պօստը չը պատկանէր պետութեան, այլ մասնաւոր, առանձին անձերի սեփականութիւնը լինէր։ Տարակոյս չը կայ որ այժմեան, բոլորի համար օգտաւէտ պօստը շատ թերութիւններ ունի, ինչպէս օրինակ այն, որ ստորագսս չինովիկները չափազանց փոքրիկ վճար են ստանում, համեմատաբար իրանց իսկապէս տաժանակիր աշխատանքին ևայլն։ Բայց որքան հեղտութեամբ կարելի էր այդ ամենը կարգի բերել, եթէ միայն ցանկութիւն լինէր։

Այդպիսի օգուտ ամեն մի գործում կարելի է ձեռք բերել, միայն հարկաւոր է որ իրաքանչիւրը այդ մասին ստածէ։ Պօստը—ստանելի մի օրինակ է։

Սօց. դեմօկրատների այն կարծիքը թէ ինչպէս որ պօստն ու երկաթուղին պետութեան գոյքն են դարձել, այնպէս էլ, մօտ ժամանակում, արտադրութեան բոլոր գործիքներն ու հաղորդակցութեան միջոցները պիտի անցնեն հասարակութեան ձեռքը, այդ կարծիքը առիթ է տեսել այն զրպարտութեան, որ իրը թէ սօց. դեմօկրատները ընդհանրապէս դէմ են ամեն մի, մինչև իսկ «փոքր մարդկանց» սեփականութեան։ Բայց ոչ թէ սօց. դեմօկրատները, այլ խորշը սեփականութիւնն ու խոշոր կապիտալն են այդ անողները։ և փոքրիկ սեփականութիւնը ան-

պարտելի ուժով ձգւում է դէպի խոշորը Խոշոր սեփականատէրերը, միշտ իրանց ձեռքը մեկնում են փոքրիկ հարստութիւններին և միշտ նրանք են որ կրկնում են թէ սօց. դեմօկրատները՝ փոքր սեփականութեան թշնամիներն են. Որքան ստախօսութիւն։ Սօցէալ դեմօկրատիան մատնացոյց է անում միայն կեանքի յաւագոյն պայմաններ ձեռք բերելու միջոցները, և այդ միջոցները վաղ թէ ուշ, փոքր սեփականատէրերի պրօլիտարանալուց յետոյ, կը գործադրւեն ժողովրդական մասսայի ձեռքով. այդ միջոցներն են—աշխատանքի համաչափ կազմակերպութիւն և կապիտալների՝ ժողովրդին անցնելը։ Ուրիշ խօսքով սօցիալ-դեմօկրատիան ձգտում է մասնաւոր սեփականութիւնը դարձնել հասարակական, կօմմունական, բայց այժմ ներկայումս, իրագործել այդ՝ անհնարին է։

Սօցիալ-դեմօկրատիայի կարծիքով, անխելքութիւն կը լինէր, այժմ իսկ անմիջապէս՝ զրկել փոքր սեփականատէրերին իրանց կարողութիւնից. Դրանով ուզում են միայն վախեցնել անգիտակ մարդկանց։ Սօց-դեմօկրատիան ընդհակառակը փոքրիկ մարդկանց բարեկամն է—որովհետեւ նա պրօլիտարիատի կուսակցութիւնն է. և խոշոր սեփականութեան շահերը թշնամի են փոքրերի շահերին այնքան ժամանակ, քանի դեռ փոքրը կուլ չէ գնացել մեծին։

Սօցիալ-դեմօկրատիան ընդհանրապէս չի մտածում այժմ իսկ ոչնչացնել մասնաւոր սեփականութիւնը. բայց նախազգուշացնում է որ մենք աստիճանաբար հասնում ենք այն վախճանական կէտին, երբ բանւոր դասակարգը կապըստամբւի, ի պաշտպանութիւն իւր շահերի իրաւունքների, խոշոր սեփականութեան ոճրագործ ոտնձգութիւնների դէմ։ Կապիտալիստական հասկացողութիւնը՝ տեղի կը տայ աշխատաւոր ժողովրդի սեփականութեան հասկացողութեան։ Ինքը սեփականութիւնը չի ոչնչանայ. նա միայն կերպարանափոխութեան կենթարկւի. իսկ դրա դէմ ոչ ոք չի կարող առարկել։ Վաղուց ի վեր գոյութիւն ունեցող սեփականական յարաբերութիւնները չեն մընում անփոփոխելի, որովհետեւ այդ բանը կասեցնում է մարդկութեան զարգացումը դէպի աւելի բարձր կատարելագործութիւնը։ Եւ խելապարութիւն կը լինէր մարդկութեան զարգացման դադարումը պահանջել. սեփականութեան յարաբերութիւնները ինքն ըստ ինքեան ձգտում են

աւելի ու աւելի կատարելագործման։ Միթէ կարելի՞ է համեմատել ներկայ հասարակական յարաբերութիւնները, հին կլասիքական կամ միջնադարեան յարաբերութիւնների (ըստըլիկութիւն) հետ. նկատելի չեն արգեօք դէպի լաւը կատարւած փոփոխութիւնները. Այնուամենայնիւ, ներկայումս էլ տիրապետում է անարդարութիւնը։ Հասարակական յարաբերութիւնների գալիք փոփոխութիւնը՝ կոչնչացնէ այդ անարդարութիւնը, հէնց գուցէ նրա համար որպէս զի մաքրէ, մարդկութիւնը դէպի կատարելագոյն հասարակական եղանակները տանող ճանապարհը։ Երբ որ կոչնչանայ վարձու աշխատանքը, երբ կընկնի խոշոր կապիտալի տիրապետութիւնը, այն ժամանակ եւ անհետ կը կորչին վաղեմի ըստրկութեան մնացորդները։ Բոլորը կը լինեն ազատ ու հաւասար և մարդկանց միջև կը տիրէ փոխադարձ համակրանքըն ու աջակցութիւնը։ Բանւոր ժողովրդից չեն խիթ այլևս ամեն մի հնարաւորութիւն՝ օգտւելու իւր աշխատանքի պառակներից և իւրաքանչիւր աշխատող կըստանայ բաւարար մնունդ, բաւարար հագուստ, հանգստեան ժամանակ և մտաւոր դարդացման ամեն միջոյ։

Այդ բոլորից յետոյ, ով կարմղ է ասել որ սօց. զեմօկրատիան անիրաւացի է։ Եւ գիւղացիները, որոնց ամենից աւելի զինում են նրա դէմ, կըմբռնեն որ ճշմարտութիւնը նրա կողմն է, որովհետեւ նրանք (գիւղացիները) արդարութեան աւելի խոր ու առողջ գիտակցութիւնն ունեն։ Հէնց գիւղում, աւելի նկատելի է սեփականութիւնների յարաբերութեան փոփոխման պատճառած բարիքը. իսկ եթէ դեռ ևս գոյութիւն ունենար աւատների իրաւունքը և գիւղացիք չը լինէին ազատ ու սեփական հող չունենային, կարծուած էք որ աւելի վատթար դրութեան մէջ չէին լինի։ Բայց պետութիւնը զրկեց աւատներին իրանց հին սեփականատիրական իրաւունքից, փոխարէնը վարձատրելով նրանց. իսկ գիւղացիներին, որոնք ճանաչւեցին որպէս ինքնուրոյն սեփականատէրիք և ինքնուրոյն քաղաքացիներ, տրւեց անհրաժեշտ փոխատւութիւնը՝ իրանց տնտեսութիւնը կազմակերպելու համար։ Այդ բանը արւեց ամբողջ պետութեան կամ ուրիշ խօսքով, ամբողջ հասարակութեան ձեռքով և ոչ մի սօց. զեմօկրատ չի ասի թէ այդ

այդպէս չը պէտք է լինէր: Իսկ ազատ ծնւած գիւղացին չի գայ և չի ասի: «այն ամենը, ինչ որ ինձ համար արեց լաւ է, բայց եթէ դուք կամենում էք ընդհանուրի դրութիւնը բարելաւեւ, վատ կանէք»: Գիւղացին այդ չի ասի: Ընդհակառակն՝ եթէ գերմանական գիւղացին աւելի խորը թափանցէ սօցիալ-դեմոկրատիական գիտութեան մէջ, նա շատ ամուր կը կպչի ժողովրդական դրօշակին: Գիւղացին՝ «որ ստիպւած է եռանդուն կերպով աշխատել, ոչինչ այնքան բարձր չի գնահատում, ինչպէս աշխատանքը, իսկ սօց. զեմոկրատիան ոչ այլ ինչ է, եթէ ոչ աշխատութեան կուսակցութիւն: Յարել նրան—նրա սեփական շահը այդ է պահանջում: Յանկալի կը լինէր տեսնել մի գիւղացի, որը ոչինչ չի անում. հաւանօրէն՝ նա վատ օրում կը լինի: Մեր ժամանակներում, քաղաքում թէ գիւղում, անգործ կարող է մնալ միմիայն խոզոր սեփականատէրը:

Ուշադրութեան պէտք է առնել և մի այլ փոփոխութիւն որ տեղի է ունենում գիւղում, սեփականութիւնների յարաբերութեան մէջ: Խօսքը համայնական հողերի ինքնուրոյն հողամասերի բաժանման մասին է: Այդ բանը՝ անկասկած ամենուրեք յառաջադիմական աղղցցութիւն է ունեցել, բայց այնուամենայնիւ, աղքատ գիւղացիութիւնը նրանից վնասներ է ստացել: Այդ դասակարգը նախկին պայմաններում աւելի լաւ էր ապրում, բայց այդ փոփոխութիւնից օգուտ ստացողը, թող արդարացի վերաբերք դէպի չունեւոր գիւղացի դասակարգը. վերջինիս դրութիւնը ամենից աննախանձելին է և համայնքը կարուղ է արդարացի մի բան անել նրա օգտին: Գիւղական ընտրողների երրորդ դասակարգը՝ պէտք է ձգտի ներկայացուցիչները մտցնել համայնական խորհրդում, որոնք ըստ իրանց կարգին, կը պարտաւորեն ամեն ջանք գործ դնել բարելաւելու իրանց կացութիւնը: Միայն դըժգոհութիւնը չի կարող օգնել գործին: հարկաւոր է բացարձակ բողոք և կարող է պատահել որ մինչև իսկ հարուստը (և նրանք, թէև շատ հազւադէպ, երբեմն կորցրած չեն լինի արդարութեան զգացմունքը) պաշտպան հանդիսանայ աղքատ գիւղացիութեան՝ ըստ ամենայնի արդարացի պահանջին:

Հողի՝ հողամասերի բաժանելը, նրանց բաշխումն ու

սահմանափակումը, շատ կարեսր փոփոխութիւններ առաջացրեց գիւղի սեփականական յարաբերութիւնների մէջ, Ներկայումս արդէն շատ տեղերում կազմում են ընկերութիւններ. ինչպէս օրինակ, գիւղացիք միանում են որևէ է գիւղատնտեսական մեքենայ գնելու համար. դրանում կարելի է տեսնել այն մօտաւոր ժամը, երբ հողի արդիւնագործութիւնը ընդհանուրի գործը կը դառնայ և աշխատանքը կը տարւի միացած կերպով: Այն մարդը սակայն՝ որին դուր չի գայ այդ բանը, թող չը վրդովկի. ներկայումս՝ այդպիսի կերպարանափոխութիւն անհնար է. այդ՝ ապագայի, բաւական հեռաւոր ապագայի խնդիր է. բայց սօց. դեմոկրատները համոզւած են որ յաջորդ սերունդները ճիշտ այդ ձևով են կառավարելու եւ հէնց որ պայմանները բաւականաշափ զարգացած կը լինեն, ամբողջ ժողովուրդը թէ գիւղերում և թէ քաղաքներում կը պահանջէ յանձնել իրան արտադրութեան միջոցները, ուրիշ խօսքով, կը պահանջէ նրանց հասարակականացումը:

«Այդ բոլորը շատ գիղեցիկ են. բայց չէ՞ որ սօց. դեմոկրատները պահանջում են եւ կանանց հասարակականացումը. այդ արդէն չափազմանց վրդովեցուցիչ է, չէ՞».

Ասա ինձ, ընթերցող, դու երբ և իցէ լսել, կամ կարդացնէլ ես այդպիսի բան: Դու երկի կարծում ես թէ նրանք կամենում են որ ամեն մի մարդ պատահած կնոջ տէր դառնայ: Արդարեւ, այդ չափազմանց սոսկալի ու վըրդովեցուցիչ կը լինէր: Բայց միթէ հսարաւո՞ր է լրջօրէն կարծել թէ կարող է լինել որևէ քաղաքական կուսակցութիւն, որը ձգտէր ի կեսանք կոչելու այդպիսի մի աներեակայելի, ամենախայտառակ ստրկութիւն: Արդեօք դժու էլ այդպէս ես կարծում, ընթերցնո՞ւ: Այդ դէպքում, ծանօթանանք այդ խնդիր հետ և դու կը տեսնես որ այդ էլ, ոչ աւելի ոչ պակաս այնպիսի մի զրպարտութիւն է, ինչպէս հարստութիւնների բաժանման առաջիկը:

Սօց. դեմոկրատների կարծիքը այդ հարցի մասին, հետևեալն է:

Այր մարդկանց և կանանց յարաբերութիւնները պէտք է սրբագրծւեն սիրով ու համակրութեամբ, Բայց մեր ժամանակներում, նրանց յաճախ է միացնում սէրը: Փողը կամ ուրիշ հաշիւներ չեն, որ համարեա միշտ, ամուսնութիւն-

ների պատճառ են լինում: Եւ դրանից չէ որ կնոջ և ամուսնու մէջ առաջանում է ցուրտ յարաբերութիւն: Եւ որքմնյան ապահարզաններ են տեղի ունենում այն պատճառով որ ամուսների կենակցութիւնը սկսում է անտանելի դառնալ: Սօց. դեմօկրատներին թւում է որ բարոյականութիւնը շատ կը շահէր այն դէպքում, եթէ ամուսնութիւնները չը կայանային փողի կամ որևէ նիւթական բնաւորութիւն կրող հաշիւների հիման վրայ: Օրէնքը կամ սովորութիւնը պէտք չէ արգելք լինի ապերջանիկ ամուսնութիւնների լուծման: Կարմղ է երբ և իցէ լաւ հետևանք ունենալ, արդէն փաստորէն խզւած կապերի պահպանումը: Թշնամի մարդիկ ուզում են հաւատացնել որ սօց. դեմօկրատները գազաններ են. մինչ վերջիններս կամենում են, ոսկեայ կուռքի փոխարէն գահի վրայ բազմեցնել սիրոյ տստածուհուն: Նրանով կայացած միութիւնը՝ սուրբ միութիւն է, և երբ անհետանում է սէրը, արտաքին կապը պէտք է խզւի: Այդ կարծիքին միանում են շատ մեծ բանաստեղծներ և մաքի մարդիկ: Եթէ այդ խզումը ոճիր է, ապա ուրեմն Գէօթէի, Շիլերի և Լէսսինգի յուշարձանները թող գահավիժեն իրանց պատւանդաններից: Բայց քանի նրանք կանգուն են, սօց. դեմօկրատները իրաւունք ունեն հաշւի առնել ընդհանուրի համակրանքը այն բանում, որ այր և կնոջ յարաբերութեան մէջ՝ բացի սիրուց ոչինչ պիտի տիրապետէ:

Այդ իսկ պատճառով, սօց. դեմօկրատները, պոռնը կութեան ամենամեծ թշնամիններն են ժամանակակից հասարակութեան ամօթանքն է այն: Բայց կը գայ և հեռու չէ այն ժամանակը, երբ ոչ աղքատութիւնը, ոչ տգիտութիւնը չը պիտի մղեն աղջիկներին «գէպի փողոց»: Երբ ոչ ոսկին, ոչ աշխարհի հզօրների գիրքը, և ոչինչ կարող պիտի լինեն ապականել մարդկային հոգին: Նայիր շուրջդ: Բանուրական մասսան միթէ չի տենչում ընտանեկան երջանիկ կեանքին: Իսկ փոքրիկ հրեխմայք որ ամբողջ օրը փողոցումն են, ամենափոքրիկ հոկողութիւնից անգամ ազատ և երեկոները, պանը գտնում են զրգուած ու խոժուած գէմքով ծընողներին, որ պատրաստ են նրանց ծեծելու, ցերեկւայ չարութիւնների համար: Որևէ է դաստիարակութեան մասին խօսք անգամ չի կարող լինել. զաւակների և ծնողների մէջ, վատա-

հութեան ու սիրոյ փոխարէն տիրում է սառնութիւն և լաճախ նոյն իսկ ատելութիւն։ Ովքե՛ր են կազմում մեր ոճրագործների գլխաւոր մասսան։ — բանւորների բարձի թողի արւած զաւակները, որոնք սակայն կարող էին հասարակութեան օգտակար անդամներ լինել, միայն թէ լաւ կերպով դաստիրակւէին և փողոցներում չը թափառէին։ բանւոր ժողովուրդը գիտակցում է այդ բանը, բայց նա ի՞նչ կարող է անել. ժամանակ է, վաղուց ժամանակ է փոխել այդ դրութիւնը։

Շատ դէպքերում, ինքը բանւորն է աշխատում իւր կեանքը պահպանելու Եւ չընայած դրան՝ ասում են որ նա ուզում է ոչնչացնել իւր ընտանիքը։ Ներկայ պայմանների մէջ աղքատի ընտանիկան քայլայման հարցում մվ է մեղաւոր. սօց. դեմօկրատները։

Հարուստը սիրուհի է պահում։ Նրա ոսկուց հարստանում են հասարակաց տների տէրեռը, և այդ բանի շնորհիւ նրա ընտանիքը քայլայում է. այս դէպքում էլ սօց. դեմօկրատներն են մեղաւոր։

Անբարոյականութիւնը՝ շնորհիւ դատարկապորտ հարուստների զեղչութեան, աճելով ու ծաղկելով յաղթական կերպով իւր գլուխն է բարձրացնում։ Բանւոր ժողովուրդն է որ պիտի բարձրացնէ մարդկութիւնը այդ ճանճի միջից։

Սօցիալիզմը այստեղ էլ օգնութեան է համուստ, երբ որ բանւորի սեփականութիւնը պաշտպանւած կը լինի, երբ կանհետանայ խաւար ու սպանիչ կարիքը — միայն այն ժամանակ այր և կնոջ միացնողը լոկ սէրը կը լինի։ Այն ժամանակ միայն սէրը այլ ևս փողով չի գնուի և անհետ կը լինեն սիրուհիներն ու պոռնիկները։ Սօց. դեմօկրատները եթէ մի բանում մեղաւոր են, այդ այն է որ նրանք ըմբուտանում են պոռնկութեան և սիրուհիների տիրապետութեան դէմ։ Նրանք կռւում են կանանց ժամանակակից հասարականացման դէմ։

Ահա սրանք են մասնաւոր սեփականութեան ոչնչացումը, ամուսնութեան ոչնչացումը և ընտանիքի ոչնչացումը։ Այդ կարծիքն ունեն սօցիալ դեմօկրատները, այս երեք ամենագլխաւոր խնդիրների վերաբերմամբ։ Բայց նախ քան ընթերցող, դու կը վճռես մւր գնալդ, սօց. դեմօկրատներին՝

թէ նրանց թշնամիների բանակը, մենք կը շօշափենք մի քանի կէտեր ևս:

Եթէ սօց. գեմոկրատները ոչինչ չունենային, որով հէնց այժմ իսկ կարողանային թեթևացնել մարդկութեան տառապող մասի վիճակը, այլ միայն խոստանային մի ինչ որ ամենարուժարար սօցիալիզմ, այդ շատ քիչ միաթարութիւն կը լինէր: Միթէ քիչ վարձատրութիւն խոստացողներ կան Շնորհերձեալ աշխարհում ի արիտուր երկրային կեանքի տիրութեան, վշտերի ու զրկանքների: Այժմ ժողովուրդը հաւատք չի ընծայում այդպիսի խոստումների: Կեանքի բարելաւումը ներկայումս է հարկաւոր, գործնական աշխարհում և ոչ չոր խօսքերի մէջ: Ժողովրդի արդ պահանջը գեղեցիկ կերպով արտայայտել է գերմանական բանաստեղծ Հենրիխ Հեյնէն իւր համերային պատմւածքներում որտեղ նա ասում է որ «երկրային բարի ջներից հրաժարելու հին օրօրող երգերի և յոյսը երկնքի վրայ զնելու փոխանակ—պէտք է լինի» երկրի վրայ կեանքի ուրիշ պայմաններ ստեղծելու նոր պահանջը:

Եւ ներկայումս սօց. գեմոկրատիան ամենուրեք հանդիսանում է աշխատաւոր ժողովրդի շահերի պաշտպանը և որտեղ միայն կարող է՝ նրա կողմն է լինում:

Մենք հիմայ չենք խօսելու սօց գեմոկրատն նրի ծրագրի մասին, որը ուղղութիւն է տալիս սօց. գեմոկրատների գործունէութեան. մենք կը շօշափենք միայն մի քանի կանխակալ կարծիքներ որ վերաբերում են այդ ծրագրի մի քանի կէտերին:

Բանտորական շարժման շնորհիւ, նպաստաւոր պայմաններում, երբեմն վարձագինը կաւելանայ: Մանը սեփականատէրերը, այդ բանին են շատ յաճախ վերագրում՝ իրանց գրութեան վատանալը. մինչդեռ իրանց հասած զըժքախտութեան պատճառը խոշոր և մանը կապիտալների միջև եղած կոիւն է, որովհետեւ եթէ մանը սեփականատէրը մի վայրկեան խորհելու լինի, թէ ինքը արդեօք իւր բանտորների տւած օգուտնված է ապրում, թէ հէնց իւր սեփական աշխատանքից ստացած օգուտառվը, այն ժամանակ նա կը մըրունէ որ իւր կեանքի գլխաւոր միշոցը իւր իսկ սեփական աշխատանքն է. և եթէ ուղիղ է այդ

ևզրակացութիւնը, ապա ուրեմն վարձագների բարձրանալով. իւր դրութիւնն ևս լաւանում է: Բանը նրանումն է որ ուրիշի աշխատանքից ստացած շահը չէ միայն, որ հանդիպանում է միջոց մանր սեփականատիրոջ կեանքի, թէկուզ վկրջինս վարձու բանւորներ էլ ունենայ:

Այս աննպաստ պայմանները որոնց մէջ դրւած են մանր ձեռնարկութիւնները խոշորների վերաբերմամբ, չեն թոյլ տայ նրանց գոյութիւն ունենալ՝ զուտ վաշտակով: Միւս կողմից բանւորների դրութեան վատթարացումը, որի հետևանքը լինում է գործերի դադար առնելը, ամենից առաջ ազդում է մանր սեփականատիրոջ դրութեան վրայ: Այդ պատճառով էլ իւր գոյութեան պահպահման համար աշխատող մարդու շահերը շատ նման են բանւոր դասակարգի շահերին, որը կուռմ է խոշոր կապիտալի դէմ, յանուն աշխատանքի շահերի:

Ընդհանրապէս անհնար է կշտամբել բանւորներին այն բանի համար, որ նրանք ցանկանում են որքան կարելի է թանգ ծախել իրանց ապրանքը—բանւորական ոյժը: Պատահում են առանձին դէպքեր, այն էլ կարճ ժամանակով, երբ բանւորներին յաջողւում է լաւ աշխատավարձ ստանալ: Պատահում է նոյն իսկ, որ դրանից մասսում է մանր սեփականատէրը, ըստ որում երիտասարդ, ամուրի բանւորի դրութիւնը այդպիսի դէպքում աւելի լաւ է լինում. բայց երեակալեցէք ընտանիքով ծանրաբեռնւած նոյն այդ բանւորի դրութիւնը, իսկապէս այդպիսի վիճակ ունի վարձու բանւորների մեծամասնութիւնը:

Ամբողջ աշխատաւոր մասսայի շահերը համագիր են, այդ բանը երեւում է հէնց նրանից, որ գործադուլների ժամանակ մանր սեփականատէրերը յաճախ բանւորների կողմն են լինում: Փոքր վարձագինը անշահաւէտ է հաւայար չափով թէ գիւղացիների և թէ արհեստաւորների համար:

Այդպիսի դէպքերում, մանր սեփականատիրոջ ինքնուրոյնութիւնը, շատ աւելի է վտանգւում քան բանւորինը: Խոշոր սեփականատէրերի թիւը արագութեամբ աճում է, մինչ մանրերը, կորցնելով ընդգիմադրելու ոյժը, կուլ են գնում խոշորներին:

Թող ուրեմն ամբողջ բանւոր ժողովուրդը, իւր շահերի ընդհանուր լինելու գիւղակցութիւնն ունենայ:

Նոյն բանը կարելի է ասել բանւորների ձգտման մասին, կարճելու բանւորական ժամերի քանակը այնտեղ, որտեղ չափազանց մեծ է այն: Ութժամեայ բանւորական օրը, ոօց. դեմօկրատների թշնամիների կարծիքով, անհրաժեշտ բարենորոգումն է, Ներկայումս ոօց. դեմօկրատները պահանջում են ամենքի համար տառժամեայ բանւորական օր: Նա որ տասը ժամ եռանդուն աշխատում է, իսկ այդ պարտաւոր է անել իւրաքանչիւրը, լիովին իրաւունք ունի մի քանի ժամեր ունենալ հանգստեան, ընթերցանութեան, և իւր մերձաւորների հետ ընկերակցութեան համար: Իսկ նրանք որ այնպէս բարձր աղմկում են բանւորների «ծուլութեան» մասին, միթէ զժհ կը լինէին, եթէ ստիպէին նրանց ութ ժամ աշխատել: Բանւորական օրւայ կրճատումը, չափազանց մեծ բարիք կը լինէր ամբողջ աշխատաւոր ժողովրդի համար և այդ շատ հասկանալի է: Միթիչ ամելէ դժւար է բանւորական օրւայ կրճատումը գիւղում, ուր՝ օրինակ հօտը կարօտ է մշտական հսկողութեան, կամ հունձը՝ եռանդուն և անընդհատ աշտատանք է պահանջում: Բայց այնտեղ էլ բանւորական օրւայ որրշ չափով կրճատումը, այնու հանդերձ կը լաւացնէր զիւղացիների զրութիւնը, որոնք աւելի վատթար պայմանների մէջ են գտնուում, քան թէ քաղաքի բանւորները: Եւ որքան աւելի շուտ գիւղում մուտք գործէ մեքենան, այնքան աւելի շուտով գիւղացիները կը հասնեն դրան:

Վարձու բանւորները հանդիսանում են որպէս առաջաւոր մարտնչողներ աշխատանքի շահերի, բայց այդ միթէ նշանակում է որ մնացեալ աշխատաւոր մասսան պէտք է անտարբեր կամ թշնամաբար վերաբերւի այդ կուին: Զէ որ այդ կուի ը մղուում է յանուն ամբողջ բանւոր ժողովը, յանուն բոլոր աշխատաւորների շահերի. վարձու բանւորները—միայն առաջաւոր գունդն են կազմում:

Բայց կուի յաջողութիւնը, պահանջում է նախ և առաջ կազմակերպութիւն: Մէկը՝ անոյժ է, իսկ ամենքը՝ ընդհանուր շահերի երկաթեայ ոյժով շաղկապւած և հզօր կազմակերպութեամբ զուգորդւած, կազմում են վիթխարի ոյժ: Առանձին ոստը հեշտութեամբ է կոտրւում, իսկ մեծ խուրձը անբեկանելի է:

Եւ սօց. դեմոկրատների՝ այդ մտքով արած ջանքերը պուր չը կոբան։ Դերմանական սօց. դեմոկրատ կուսակցութիւնը մի ահազին ոյժ է։ Թայխստագում 81 պատգամաւոր ունենալը դրա լաւագոյն ապացոյցն է։ և այդ ներկայացուցիչների աշխատութիւնը շատ ու շատ քաղաքացիների մտքերի պարզելուն նպաստեց։ Ո՞վ կարող է բացասել նրանց գործունէութիւնը։ Եւ միայն Թայխստագում չէ որ գտնւում են բանւոր ժողովրդի ներկայացուցիչները, այլ նաև «Ակամանական» գանձան դումաներում և ամեն տեղ նրանց ճառերը նպատակի են հասնում։

Այդ մեծ յաջողութիւնները ձեռք են բերւած բաւական կարճ ժամանակամիջոցում։ 1863 թւին էր որ առաջին անգամ բարձրացաւ սօց. դեմոկրատիկական դրոշը, այդ ժամանակից շատ քիչ է անցել, ընդամենը 40 տարի։ Եւ որքան զրաբրտութիւններ, որքան արհամարհանք, որքան հալածանք, ինչքան մարդիկ կուլ գնացին բանտերին։ Քանիսին դրկեցին մի կտոր հացից, աշխատանքից։ Ամբողջ տասներկու տարի, միայն դրա համար ստեղծւած՝ սուտ ու պատիր մեղադրանքների վրայ հիմնած բացառիկ օրէնքներ գործադրւեցին։ Սօց. դեմոկրատիան անմեղ էր կատարւած եղեռնափորձերի մէջ։—Գէդէլը, այդ ստախօս մարդը, պատկանում էր պաշտօնաթող պալատական քարոզիչ Շտէկկէրի կուսակցութեան։ Նօրիլինգը, ոչ թէ սօց. դեմոկրատ, այլ ազգային-լիբերալ կուսակցութեան անդամ էր։ Այսուամենայնիւ սօցիալ դեմոկրատներին հալածում էին որպէս սոսկալի ոճրագործների, արտաքսում էին մէկ քաղաքից միւսը, հայրենի մերմանիայից դէպի օտար երկրներ։ Հարիւրաւոր կեանքեր ու ընտանիքներ ոչնչացան, հազարաւոր մարդիկ զոհւեցին բանտերում։ Բայց չը նայելով դրան, շարժումը անեց ու ընդարձակւեց։ Այժմ՝ աշխարհի և ոչ մի ոյժը չի կարող նրան կանգնեցնել, ըստ որում նա մեծամասնութեան շահերի արտայայտիչն է և նրա հետ են կապւած մարդկութեան բարձրագոյն իդէալները։

Փոքրիկ երեխան անգամ հասկանում է որ այդ շարժումը՝ որ ստացել է այդպիսի ոյժ ու նշանակութիւն, չի կարող մի քանի առանձին ազիտատօրների արհեստական ստեղծագործութիւնը լինել և ոչ էլ արդիւնք՝ վերացական

գաղափարներին կամ արատաւոր կրքերին Ոչ նրա պատճառները՝ ժողովրդի ընդհանուր զբութեան մէջ են գտընտում: Ինչ որ մի ժամանակ ասում էին քրիստոնէութեան մասին, նոյնը այժմ կարելի է ասել նրա մասին, եթէ նա չի բղինել կեանքից և նրա համար անպէտք է—կը կորչի, իսկ եթէ չը լինեն հալածանքները, ոչ մի բան չի կարող նրան արգելել իւր ճանապարհը հարթելու:

Կասեն որ սօց դեմօկրատները պետութեան թշնամիներն են. թող այդպէս լինի: Այդ չի խանդարէ նրանց յաղթական ընթացքը: Ճիշտն ասած՝ ում թշնամիներն են սօց դեմօկրատները—պետութեան այն յետամնաց հաստատութիւնների, որոնք խոչընդուռ են լինում յետագայ զարգացման և ժողովրդի ազատութեան:

Թրանսիսյից ստացւած հինգ միլիոնը, աներևոյթ եղաւ մի քանի տարւայ ընթացքում, իսկ հարկերը ոչ միայն չը նւազեցին, այլ ընդհակառակը օր է ցոր աւելանում են: Մաքսահարկն ու կողմնակի հարկերը ամենաանհրաժեշտ պարանքների վրայ, նպաստում են կենսական մթերքների անսովոր թանգացման. սօց դեմօկրատները այդ ամենը տեսնելով, գտնում են որ պետութիւնը չափականց քիչ է նոգս անում իւր ժողովրդի շահերի մասին, նրան քիչ է անհանգըստացնում այն, որ երկրում հարիւր հազարաւոր անդրծներ կան և որ աշխատավարձը խիստ չնշին է. մինչ միւս կողմից, խոշոր կապիտալիստների վաստակը մեծանում է, շաքարի, գինու և նմանօրինակ մըցանակներով:

Սօց դեմօկրատները տեսնելով թէ որքան շատ ծախս է լինում զօրքի և նաւատօրմի վրայ, և որքան քիչ ծախս է լինում ժողովրդական կրթութեան և ուսումնարանների վրայ, նկատում են որ պետութիւնը վատ կերպով է բաժանում միջոցները. երբ ուզում են ապացուցել որ դրանք հարկաւոր են խաղաղութեան համար, սօց դեմօկրատները պատասխանում են որ մշտական ահազին բանակները միայն սպառնում են խաղաղութեան, որը ոչնչով չէր խախտի, եթէ ժողովուրդները իրանք որոշէին միջադրային յարաբերութիւնները և որ նրանց մտքովս իսկ չի անցնի իրար սպանելու կամ այնքան ահագին աշխատանքով ձեռք բերածները ոչընչացնել երկու հարկան գիւղերի բնակիչները չեն կռւի միանց հետ:

Սօց. դեմոկրատները երբ տեսնում են որ բանւորների արհեստաւորների, գիւղացիների և մանր չինովակների զաւակները ընդհատում են իրանց զբաղմունքները երկու երեք տարի, սովորելու համար այն, ինչ որ հարուստների որդիքը այնքան շուտ և լաւեն սովորում որ ըստ մեծի մասին սպա, են դառնում. երբ նրանք տեսնում են որ զինւորների ստացած մնունդը շատ աւելի վատ է քան սպաներինը, այն ժամանակ նրանք, սօց. դեմոկրատները, ասում են որ այդտեղ ժողովրդի նկատմամբ շատ քիչ արդարութիւն և սէր է տածւում: Նրանք կարծում են որ սնունդը ամենքի համար միասեսակ պիտի լինի և որ այդ երկու կամ երեք տարւայ ժամանակամիջոցը անմիջապէս կոչնչանար, եթէ ազնւականների, խոշոր կայւածատերերի, մինխոտրների, սեղանուարների, գործարանապատերերի գաւակներն եւս պարտաւորեկին նոյնքան տարի ապրել զօրանոցներում:

Սօցիալ դեմոկրատիան կարծում է նոյնպէս որ ժամուլին, միզութիւններին և ժողովրդական բարեկեցութեան և վայելչէ ժողովրդի արժանապատճութեան: Առանց նրան՝ ժողովուրդը երեք չի կարող գոյութիւն ունենալ:

Եթէ այժմ այս բոլոր ասածներից յետոյ, սօց. դեմոկրատներին մարդկութեան թշնամիներ համարեն, նրանք այլև չեն վրդովւի: Նրանք ժողովրդի թշնամիները չեն:

Այժմ մտածիր, ընթերցող: Եթէ դու հասկացար որ սօց. դեմոկրատները ժողովրդի կողմն են և ոչ թէ նրա դէմ են, եթէ դու ըմբռնեցիր որ նրանք ժողովրդի յաջողութիւնըն ու երջանկութիւնն են ցանկանում, մարտնչում են յանուն նրա շահերի և ձգտում նրա հոգեկան դարձացման, ապա ուրեմն միացիր նրա հետ: Ուշադիր եղիր որ ընտրութիւնները օրինական լինեն, որպէս զի ոչ սպառնալիքը, ոչ խոստումները և ոչ ձայների առեւտուրը, չը կարողան ազդել նրանց վրայ՝ ինչպէս այդ յաճախ պատահելէ: Երբ լսելու լինես սօց. դեմոկրատների թշնամիների խայտառակ զրպարառութիւնները, չը հաւատաս նրանց: Եթէ հրապարակով չը կարողանաս բողոքել դրա դէմ, ապա ասա հարեւանիդ, ընկերոջը: Ասա որ սօցիալ դեմոկրատիան բան-

ւոր դասակարգի, պրօլետարիատի կուսակցութիւնն է և ձգտում է միմէայն ամբողջ հասարակութեան երջանկութեան, համամարդկային բարորութեան:

Գեղեցիկ երգ, բարեկամներ,  
Նոր երգ ուզում եմ ձեզ երգել.

Մենք ուզում ենք՝ այս աշխարհում  
Երկնից արքայութիւնն հիմնել:

**ՄԵՐ ԻՂՃՆ Է ԵՐՋԱՆԻԿ ԱՒՆԵԼ**

**Մենք չենք ուզում քաղցից մեռնել.**

Ծոյլ որովայնը պէտք չէ վատնէ

Գործող ձեռքի վաստակն արդար:

አዲስ አበባ

## અનુભૂતિ

«Զմելային Զըոյցներ»



ԳԵՐԱ



77412  
265-274